



ԱՐԱՐԱՏ ԼԵՌԻ

Հայաստանը հիւսիսէն եւ կը միանայ մեր Լոռիկի անտառուտ լեռներուն, որոնք Հայաստանը կը բաժնեն Վրաստանէն:

դ) Արեւելեան շղթաները. - Լոռիկի լեռնաշղթան գէպի հարաւ ծոելով, Կիրովականի քովէն (Ղարաքիլիսէ) կ'իջնէ կը միանայ Սիւնիքի լեռներուն, որոնք իրենց ծոցին մէջ առեր են Սեւանայ լիճը (1925 մեղք բարձր ծովէն): Սեւանի արեւելեան կողմինները Սիւնիքի լեռներ կը կոչուին, արեւմըտեան կողմը՝ Գեղամայ լեռներ: Բարձր եւ սուր դագավթներ ու խորունկ ձորեր ունին, չոր եւ ժայռուտ են, ու գրեթէ անանցանելի, անոր համար բնակիչները միշտ կիսանկախ եւ քաջ կոռուզներ եղած են:

դ) Կեդրոնական լեռներ. - Այս երեք մեծ լեռնաշղթաներուն մէջ կը տարածուի Կեդրոնական Հայաստանը, ուր կը բացուին իրարմէ բաժնուած շուրջ 15 մեծ ու փոքր դաշտագետիններ, զարմանալի տեսարաններով եւ հարուստ բուսականութեամբ: